Կ-711-14.11.2023-ԱՀ-011

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
(Լրամշակված նախագիծ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դիվանագիտական ծառայության մասին» 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-249 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնը քաղաքացիական ծառայության պաշտոն է: Գլխավոր քարտուղարն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված պետական մարմնի գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունները:»:

2) 2-րդ և 3-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 5-8-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Կառավարության որոշման հիման վրա օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմնին կից կարող են գործել պաշտպանության հարցերով, ռազմական և առևտրական

կցորդներ, մասնագիտացված միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներ:

6. Պաշտպանության հարցերով, ռազմական կցորդները կարող են ունենալ տեղակալներ և օգնականներ:

7. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմնին կից Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող են գործել այլ կցորդներ և ներկայացուցիչներ՝ այդ պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով:

8. Սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում նշված կցորդների և ներկայացուցիչների, ինչպես նաև պաշտպանության հարցերով, ռազմական կցորդների տեղակալների և օգնականների հաստիքները սահմանվում են Վարչապետի որոշմամբ:

9. Սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում նշված կցորդները և ներկայացուցիչները պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են Վարչապետի որոշմամբ, իսկ պաշտպանության հարցերով, ռազմական կցորդների տեղակալները և օգնականները՝ իրավասու պետական մարմնի ղեկավարի հրամանով:»

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ և 11-րդ մասերով.

«10. Սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում նշված կցորդները և ներկայացուցիչները գործում են օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի ընդհանուր ղեկավարությամբ:

11. Սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում նշված կցորդների և ներկայացուցիչների, ինչպես նաև պաշտպանության հարցերով, ռազմական

կցորդների տեղակալների և օգնականների առաջադրման, նշանակման, ազատման, լիազորությունների շրջանակի, գործունեության, նրանց և նրանց ընտանիքի անդամների պահպանման ծախսերի ֆինանսավորման կարգի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Կառավարության որոշմամբ:»:

Հոդված 4. Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասում «ներկայացուցիչները նշանակվում են» և «նշանակվելու դեպքում» բառերից հետո «մինչև» բառերը հանել:

Հոդված 5. Օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի «արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար» բառերը հանել:

Հոդված 6. Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Բացառիկ դեպքերում ծառայության մեջ ունեցած լուրջ հաջողությունների և անբասիր աշխատանքի համար մրցութային-ատեստավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա դիվանագետին կարող է շնորհվել արտահերթ՝ մինչև երկու ավելի բարձր դիվանագիտական աստիճան կամ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետից շուտ հերթական դիվանագիտական աստիճան սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետից շուտ:

5. Արտահերթ դիվանագիտական աստիճանի կամ սահմանված ժամկետից շուտ հերթական դիվանագիտական աստիճանի շնորհումը կարող է իրականացվել ծառայության ընթացքում ոչ ավելի, քան երկու անգամ:»:

Հոդված 7. Օրենքի 25-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 25. Դիվանագիտական ծառայության պաշտոնում նշանակման համար սահմանափակումները**

1.Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները:»:

Հոդված 8. Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասում «առնվազն հազար տպաքանակ ունեցող մամուլով և (կամ)» բառերը հանել:

Հոդված 9. Օրենքի 32-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Վարչապետի աշխատակազմից և պետական կառավարման համակարգի, բացառիկ դեպքերում՝ պետական անվտանգության կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների, ազատությունների ու անվտանգության պաշտպանության նպատակով՝ այլ մարմիններից համապատասխան ծառայողներ կարող են գործուղվել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության համակարգ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և նշված մարմինների միջև գրավոր համաձայնության դեպքում:»:

2) 4-րդ մասում «քաղաքացիական» բառը փոխարինել «այլ պետական» բառով:

Հոդված 10. օրենքի 35-րդ հոդվածում կատարել հետևյալ լրացումները.

1) 1.1 մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.2 մասով.

«1.2. Կադրերի ռեզերվում գրանցվում են նաև դիվանագիտական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթում հաղթող ճանաչված, սակայն պաշտոնի չնշանակված անձինք:».

2) 4-րդ մասում «դիվանագիտական ծառայության ստաժի մեջ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ, սույն հոդվածի 1.2 մասով նախատեսված դեպքի» բառերը:

Հոդված 11. Օրենքի 37-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի «վարքագծի կանոնների խախտումը» բառերից հետո լրացնել «անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները, և իրավիճակային շահերի բախման դեպքերը» բառերը:

2. 2-րդ մասի «վարքագծի կանոնների խախտումների» բառերից հետո լրացնել «անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, և իրավիճակային շահերի բախման դեպքերի» բառերը:

Հոդված 12. Օրենքում լրացնել նոր 42.1-ին հոդված հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 42.1. Դիվանագիտական ծառայության և դիվանագիտական պաշտոն զբաղեցնող անձանց անձնական գործը**

1.Դիվանագիտական ծառայության և դիվանագիտական պաշտոն զբաղեցնող անձանց անձնական գործը վարելու կարգը սահմանում է արտաքին գործերի նախարարը:»:

Հոդված 13. 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնող գլխավոր քարտուղարը շարունակում է պաշտոնավարել՝ մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի հաստատումը: Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը հաստատվելուց հետո

գլխավոր քարտուղարի պաշտոնը զբաղեցվում է Կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N 792-Ն որոշմամբ սահմանված կարգով ժամկետային աշխատանքային պայմանագրով՝ մինչև «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքով տվյալ պաշտոնին նշանակում կատարելը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 3. «Դիվանագիտական ծառայության մասին» 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-249 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնը քաղաքացիական ծառայության պաշտոն է: Գլխավոր քարտուղարն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված պետական մարմնի գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունները:»:

2) 2-րդ և 3-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածում՝

3) 5-8-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. ~~Հայաստանի Հանրապետության կ~~ Կառավարության որոշման հիման վրա օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության

դիվանագիտական ծառայության մարմնին կից կարող են գործել պաշտպանության հարցերով, ռազմական և առևտրական կցորդներ, մասնագիտացված միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներ:

6. Պաշտպանության հարցերով, ռազմական կցորդները կարող են ունենալ տեղակալներ և օգնականներ:

7. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմնին կից Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող են գործել այլ կցորդներ և ներկայացուցիչներ՝ այդ պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով:

8. Սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում նշված կցորդների և ներկայացուցիչների, ինչպես նաև պաշտպանության հարցերով, ռազմական կցորդների տեղակալների և օգնականների հաստիքները սահմանվում են ~~Հայաստանի Հանրապետության վ~~Վարչապետի որոշմամբ:

9. Սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում նշված կցորդները և ներկայացուցիչները պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են ~~Հայաստանի Հանրապետության վ~~Վարչապետի որոշմամբ, իսկ պաշտպանության հարցերով, ռազմական կցորդների տեղակալները և օգնականները՝ իրավասու պետական մարմնի ղեկավարի հրամանով:»

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ և 11-րդ մասերով.

«10. Սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում նշված կցորդները և ներկայացուցիչները գործում են օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի ընդհանուր ղեկավարությամբ:

11. Սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում նշված կցորդների և ներկայացուցիչների, ինչպես նաև պաշտպանության հարցերով, ռազմական կցորդների տեղակալների և օգնականների առաջադրման, նշանակման, ազատման, լիազորությունների շրջանակի, գործունեության, նրանց և նրանց ընտանիքի անդամների պահպանման ծախսերի ֆինանսավորման կարգի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Կառավարության որոշմամբ:»:

Հոդված 4. Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասում «ներկայացուցիչները նշանակվում են» և «նշանակվելու դեպքում» բառերից հետո «մինչև» բառերը հանել:

Հոդված 5. Օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի «արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար» բառերը հանել:

Հոդված 6. Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Բացառիկ դեպքերում ծառայության մեջ ունեցած լուրջ հաջողությունների և անբասիր աշխատանքի համար մրցութային-ատեստավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա դիվանագետին կարող է շնորհվել արտահերթ՝ մինչև երկու ավելի բարձր դիվանագիտական աստիճան կամ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետից շուտ հերթական դիվանագիտական աստիճան սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետից շուտ:

5. Արտահերթ դիվանագիտական աստիճանի կամ սահմանված ժամկետից շուտ հերթական դիվանագիտական աստիճանի շնորհումը կարող է իրականացվել ծառայության ընթացքում ոչ ավելի, քան երկու անգամ:»:

Հոդված 7. Օրենքի 25-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 25. Դիվանագիտական ծառայության պաշտոնում նշանակման համար սահմանափակումները**

1.Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները:»:

Հոդված 8. Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասում «առնվազն հազար տպաքանակ ունեցող մամուլով և (կամ)» բառերը հանել:

Հոդված 9. Օրենքի 32-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Վարչապետի աշխատակազմից և պետական կառավարման համակարգի, բացառիկ դեպքերում՝ պետական անվտանգության կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների, ազատությունների ու անվտանգության պաշտպանության նպատակով՝ այլ մարմիններից համապատասխան ծառայողներ կարող են գործուղվել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության համակարգ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և նշված մարմինների միջև գրավոր համաձայնության դեպքում:»:

4) 4-րդ մասում «քաղաքացիական» բառը փոխարինել «այլ պետական» բառով:

Հոդված 10. Օրենքի 35-րդ հոդվածում կատարել հետևյալ լրացումները.

1) 1.1 մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.2 մասով.

«1.2. Կադրերի ռեզերվում գրանցվում են նաև դիվանագիտական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթում հաղթող ճանաչված, սակայն պաշտոնի չնշանակված անձինք:».

2) 4-րդ մասում «դիվանագիտական ծառայության ստաժի մեջ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ, սույն հոդվածի 1.2 մասով նախատեսված դեպքի» բառերը:

Հոդված 11~~0~~. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի «վարքագծի կանոնների խախտումը» և 2-րդ մասի «վարքագծի կանոնների խախտումների» բառերից հետո լրացնել «անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները, և իրավիճակային շահերի բախման դեպքերը» բառերը:

Հոդված 12~~1~~. Օրենքում ~~ավելացնել~~ լրացնել նոր 42.1-ին հոդված հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 42.1. Դիվանագիտական ծառայության և դիվանագիտական պաշտոն զբաղեցնող անձանց անձնական գործը**

42.1. Դիվանագիտական ծառայության և դիվանագիտական պաշտոն զբաղեցնող անձանց անձնական գործը վարելու կարգը սահմանում է արտաքին գործերի նախարարը:»:

Հոդված 13~~2~~.1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնող գլխավոր քարտուղարը շարունակում է պաշտոնավարել՝ մինչեւ օրենսդրությամբ սահմանված կարգով գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի հաստատումը: Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը հաստատվելուց հետո գլխավոր քարտուղարի պաշտոնը զբաղեցվում է Կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N 792-Ն որոշմամբ սահմանված կարգով ժամկետային աշխատանքային պայմանագրով՝ մինչեւ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքով տվյալ պաշտոնին նշանակում կատարելը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

(Կ-711-14.11.2023-ԱՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին, 8-րդ և 9-րդ մասեր	Համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով սահմանված տեխնիկական բնույթի պահանջներին	Ընդունվել է	Ընդունվել է

2.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 11-րդ հոդված**	Համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով սահմանված տեխնիկական բնույթի պահանջներին	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Ազգային ժողովի պատգամավոր Սարգիս Խանդանյան	**Նախագծի 9-րդ հոդվածից հետո լրացվող 10-րդ հոդված**	Օրենքի 35-րդ հոդվածում կատարել հետևյալ լրացումները. 1) 1.1 մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.2 մասով. «1.2. Կադրերի ռեզերվում գրանցվում են նաև դիվանագիտական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթում հաղթող ճանաչված, սակայն պաշտոնի չնշանակված անձինք:». 2) 4-րդ մասում «դիվանագիտական ծառայության ստաժի մեջ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ, սույն հոդվածի 1.2 մասով նախատեսված դեպքի» բառերը: Լրացումը կատարելու անհրաժեշտությունը	Ընդունվել է	Ընդունվել է

			պայմանավորված է այն հանգամանքով, որ երբեմն միևնույն թափուր պաշտոնի համար դիմում են մեկից ավելի քաղաքացիներ, ովքեր մրցույթը հաղթահարում են հավասար միավորներով, սակայն պաշտոնի նշանակվում է միայն մեկը: Օրենքում նշված դրույթի առկայությունը հնարավորություն կտա առանց լրացուցիչ ռեսուրսներ օգտագործելու և նոր մրցույթ հայտարարելու՝ մրցույթում հաղթող ճանաչված, բայց պաշտոնի չնշանակված անձին գրանցելու կադրերի ռեզերվում, այնուհետև թափուր պաշտոնի առկայության դեպքում նշանակելու է համապատասխան պաշտոնին:		
4.	Ազգային ժողովի պատգամավոր Սարգիս Խանդանյան	**Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մաս**	«Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:» բառերը փոխարինել «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է